Շաբաթ օր (6 Մարտ) Կիւրղի. զկին Մարտիրոսին գնացեալ թաղեցաք։

Կիրակի (7 Մարտ) Անառակի։

Բշի օրս (8 Մարտ) փաշան ի գոլ ելեալ և ի գիշերի յանուանի սահմանս քաղաքիս սպանեալ զոմանս. գող են ասացին, և մի գողն պուրխար գոլով՝ դաւանութեամբ Հոռոմոց՝ այր զգալանաբարու, առաջի փաշային ասէ թէ Ուրանամ, զի փրկեսցի. և ասացեալ փաշան՝ եթէ դու անպօր գոլով և կեաւուր՝ զայդ գործէիր, և թէ լինիցիս տաճիկ՝ զաշխարհ խանձես այրելով։ Եւ հրամայէ զօրավարաց թլփատել զնա և բերել առաջի իւր. և բերեալ առաջի նորա տաճիկ կերպիւ, ասէ՝ Սպանջիք զպիղծդ. և այնպէս կորչի այրն այն ի կորուստն յաւիտենից։

Յաւուրս հրաման եկեալ ի վէզիրէն զի ժողովեսցեն զօրտուն վասն պատերազմին՝ յամենայն արհեստաւորացն։

Եւ ևս ի վերայ այսմ տէֆտէրտարի բան՝ զի զմիրին առցեն ի մէնջ փութանակի, քանզի յամենայն ամի ի գլուխ տարոյն առնէին, որ և Մէհրէմ ասի, այլ այժմ Զ ամսով յառաջ առնել հրամայեաց։ Եւ ըմբռնեալ տէֆտէրտարին պահանջէր, և Ե եկեղեցին [տես]անէր զպատրաստութիւն դրամին. իսկ մեր եկեղեցոյ [չար]քն, զոր յայտնեալ եմք ի սոսկ մատեանս զ[ար]արմունք նոցին սուղ բանիւ, որ մի ըստակ [ոչ] ետուն շահ եկեղեցոյն, այլ՝ պարտք ի վերայ [պար]տուց, և այժմ խորհեցան զայս ևս չար[իս] առնել ժողովրդոցն, և զմիրին զայս առնել յամենեցունց, զոր ոչ եղեալ էր երբեք, քանզի առնէին ննջեցելոց Ի ըստակ, և ծնելոցն Ի և պսակ[ելոցն] . . . և Զ եկեղեցին, զոր ծախէին զԱնատօլի և զՈւռումէլի և . . . և մերն հասանէր Ի և ԻԷՌ . . . հանէր զ . . . [մա]հուն և կենացն իւրեանց (անկ-նա-որ ֆակ-ֆէ-էրո-